



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի  
ՆՀ-728 ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրերի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ որ ոչ ու մ է մ.

Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.10-րդ և 1.11-րդ կետերը շարադրել են տեսական խմբագրությամբ՝

«1.10. Մարզպետին կից գործում է խորհրդակցական մարմին՝ մարզի խորհուրդ, որի կազմում ընդգրկվում են մարզպետը և համայնքների ղեկավարները»:

Մարզի խորհրդի նիստին մասնակցում են մարզպետի տեղակալը (տեղակալները) և հանրապետության գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարները:

Մարզի խորհրդի նիստերին կարող են մասնակցել մարզի համայնքների ավագանու անդամները:

Մարզի խորհրդի նիստին մարզպետի հրավերով կարող են մասնակցել մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցներ, հանրապետական գործադիր մարմինների ներկայացուցիչներ և այլ անձներ:

Մարզի խորհրդի նիստին կարող են մասնակցել հաստրակական միավորումների ներկայացուցիչներ:

Մարզի խորհրդի նիստն իրավագոր է, եթե ներկա է մարզի խորհրդի անդամների կեսից ավելին:

Մարզի խորհուրդը մարզի խորհրդի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ ընդունում է մարզի առևտունությունների վերաբերյալ ուղերձներ:

Մարզի խորհրդի նիստը հրավիրում և վարում է մարզպետը՝ առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

Մարզպետը մարզի խորհրդի նիստից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ մարզի խորհրդի նիստի անցկացման մասին տեղեկացնում է մարզի խորհրդի անդամներին և մարզի խորհրդի նիստին հրավիրված անձանց:

Մարզի խորհրդի անդամները մարզի խորհրդի նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ մարզպետին կարող են ներկայացնել առաջարկություններ՝ մարզի խորհրդի նիստի օրակարգում ընդգրկելու նպատակով:

Մարզի համայնքների ավագանու անդամները մարզի խորհրդի նիստի օրակարգում հարցեր ընդգրկելու վերաբերյալ առաջարկությունները ներկայացնում են իրենց համայնքի ղեկավարի միջոցով:

Մարզի խորհրդի նիստի օրակարգի նախագիծը հրապարակվում է մարզպետառանի ինստերնետային կայքում՝ մարզի խորհրդի նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:

Մարզի խորհրդի սահմանած՝ մարզի խորհրդի նիստի օրակարգը հաստատվում է մարզի խորհրդի կողմից՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

Մարզի խորհրդի նիստը հրապարակային է:

Մարզի խորհրդի նիստը լուսաբանվում է մարզպետի կողմից հրավիրված գանգվածային լրատվության միջոցներով:

Մարզի խորհրդի նիստի արդյունքում կազմվում է արձանագրություն։ Մարզի խորհրդի նիստի արձանագրությունը և մարզի խորհրդի ուղերձները հրապարակվում են մարզպետարանի ինստերնետային կայքշնում։


Մարզի խորհրդի աշխատակարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից։

1.11. Մարզի խորհրդի նիստերին մարզպետը՝

ա) իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմիններին Հայաստանի Հանրապետության օրենսդրական և գերատեսչական իրավական ակտերի մասին,

բ) լուծում է կազմակերպական այլ հայեցակարգերը,

գ) մարզի խորհրդի ընսարկման և ներկայացնումը՝



- Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացվող իր հաշվետվությունները՝ մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի և իր գործունեության մասին.

- մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի նախագիծը.

- մարզային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի հիման վրա տարեկան աշխատանքային պլանի կազմման և մարզային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման մրնիւորինգի և գնահատման արդյունքները.

- պետական բյուջեի միջոցներով, ինչպես նաև միջազգային և այլ կազմակերպությունների կողմից մարզի տարածքում իրականացվող նպատակային զարգացման ծրագրերի նախագծերը.

- մարզի կտրվածքով պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտը, նախագիծը, ինչպես նաև տվյալ տարկան հաջորդող տարվա պետական բյուջեի հայտերը և նախագիծը.

- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով և այլ միջոցներով մարզին վերաբերող ծրագրերի կառարման ընթացքը.

- հաղորդում տվյալ տարվա պետական բյուջեով մարզին հաստկացված միջոցներով իրականացված ծրագրերի եռամսյակային, կիսամյակային և իննամսյա հաշվետվությունների վերաբերյալ, իսկ տվյալ տարվա հաշվետվության վերաբերյալ հաղորդումը ներկայացնում է պետական զանձապետական համակարգի կողմից տարեկան հաշվետվությունը իրապարակվելուց հետո կայանալիք մարզի խորհրդի նիստի ժամանակ,

- համայնքների դեկավարների առաջարկություններն ու դիտողությունները մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության վերաբերյալ,

- օրենքով սահմանված կարգով պետական համապատասխան մարմինների կողմից մարզպետարանի աշխատակազմում, մարզային ենթակայության կազմակերպություններում, ինչպես նաև համայնքի աշխատակազմում, համայնքային բյուջետային հիմնարկներում, համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում իրականացված վերահսկողության, ստուգման և ուսումնասիրության արդյունքում կազմված փաստաթղթերը.

- օրենքով սահմանված կարգով համապատասխան մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացված վարչական և ֆինանսական հսկողության արդյունքում կազմված փաստաթղթերը.

- «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական հսկողություն իրականացնող պետական մարմինների կողմից համայնքներում իրականացված հսկողության արդյունքում կազմված փաստաթությը.

- օրենքով սահմանված կարգով տվյալ տարվան հաջորդող տարիս՝ մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության՝ մարզպետի ամենայա աշխատանքային ծրագրի կամ դրա փոխանությունների նախագիծը.

- Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ մարզին առնչվող այլ հարցեր»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Ն Ա Խ Ա Զ Ա Հ

2013թ. սեպտեմբերի 30  
Երևան  
ՆՀ-245-Ն



Ա. ՄԱՐԳԱՐԵԱՆ